ԳՈՌ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(ԵՊՀ)

2019 Թ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԹՈՒՆՋԵԼԻՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՇՈՒՐՋ

Տասնամյակներ ի վեր Թուրքիայի ձախակողմյան շարժման և առհասարակ այլախոհության գլխավոր օջախներից է եղել երկրի արևելյան նահանգներից Թունջելին[1] (նախկինում՝ Դերսիմ[2]), որտեղից ծագում են հանրապետական Թուրքիայի այլախոհ գործիչների ճնշող մեծամասնությունը: Այս տարվա մարտի 31-ին կայացած ՏԻՄ ընտրություններում ԹԿԿ-ի հաջողությունը թեև իր բնույթով աննախադեպ էր, սակայն նման նկարագիր ունեցող տարածաշրջանում չի կարող անսպասելի համարվել:

2019 թ. հունվարին ԹԿԿ-ն և Սոցիալիստական մեջլիսների դաշնությունը հայտարարեցին, որ Թունջելիում առաջադրում են Ֆաթիհ Մեհմեդ Մաչօղլուի թեկնածությունը, ով նույն մարզի Օվաջըք գավառի համայնքապետն էր: Թունջելիի հիվանդանոցի նախկին լաբորանտ Մաչօղլուի «հաջողության պատմությունը» սկսվեց 2014 թվականից, երբ ստանալով ընտրողների ձայների 36.06%[3] նա

---

[1] Թունջելիի մարզը (նախկինում՝ Դերսիմ) գտնվում է Թուրքիայի արևելյան հատվածում: Մարզկենտրոնը Թունջելի քաղաքն է: Մարզի բնակչությունը, ըստ 2018 թ. տվյալների, կազմում է 88.198 մարդ՝ դարձնելով Թունջելին Թուրքիայի երկրորդ ամենասակավաբնակ մարզը՝ զիջելով միայն Բայբուրդին (մանրամասն տես https://www.nufusu.com/il/tunceli-nufusu): Բնակչության մոտ 70% զազաներ են, նաև կան հայեր, հույներ, քրդեր, չերքեզներ: Քրդերի մեջ մեծ թիվ են կազմում իսլամացված հայերը: Բնակչության մեծամասնությունը դավանանքով ալևի են:

[2] Այս մասին մանրամասն տե՛ս, Tunceli vilayetinin idaresi hakkında kanun, Resmi gazete, 1 ocak 1936, s. 3195.

[3] https://www.haberturk.com/secim/secim2014/yerel-secim/ilce/ovacik-787, մուտքի ամսաթիվ՝ 23.05.2019:

Օվաջըքի ղեկավարի պաշտոնում փոխարինեց Հանրապետական ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ Մուստաֆա Սարը-գյուլին։ 2014 թ. Օվաջըքը միակ վայրն էր,որտեղ կոմունիստները կարողացան հաղթանակ տոնել։

Օվաջըքը շուրջ 7000 բնակչություն ունեցող գավառ է[4], որը 2014 թ. դրությամբ ուներ 1.507. 000 լիրա պարտք, 60%-ի հասնող գործազրկություն, կաթվածահար վիճակում գտնվող գյուղատնտեսություն[5]։ Համայնքապետի պաշտոնը ստանձնելուց ի վեր Մաչօղլուն ձեռնարկեց մի շարք բարեփոխումներ։

Առաջին հրամանով նա հեռացնել տվեց իր աշխատասենյակի դուռը՝ հայտարարելով, որ իր աշխատասենյակն այսուհետ բաց է բոլորի համար։ Մաչօղլուն հրաժարվեց նաև ծառայողական ավտոմեքենայից, դրա համար նախատեսված վառելիքային կտրոնները տրամադրեց քաղաքային ավտոբուսներին՝ դրանք դարձնելով անվճար բնակչության համար։ Ավելին, իր աշխատավարձի մի մասը Մաչօղլուն հատկացրեց Օվաջըքից ուսանողների վարձը վճարելուն[6]։

Մաչօղլուն ընթերցողների համար 24 ժամ բաց մեծ գրադարան հիմնեց անմիջապես համայնքապետարանի շենքում, իսկ երեխաների մոտ ընթերցասիրություն սերմանելու նպատակով գործարկել է հատուկ ակցիա՝ 1 ժամ գիրք կարդացող երեխան կարող է 1 ժամ անվճար հեծանիվ վարել։

Գործազրկությունը կրճատելու և բյուջեն ավելացնելու նպատակով նա պետությանը պատկանող շուրջ 65 հեկտար հող տվեց գյուղացիներին, գյուղատնտեսությամբ զբաղվելու համար նրանց տրամադրեց տեխնիկա և պարարտանյութ, անձամբ մասնակցում էր

---

[4] https://www.nufusu.com/ilce/ovacik_tunceli-nufusu, մուտքի ամսաթիվ՝ 23.05.2019։

[5] Komünist başkan efsane hikaye, 17.03.2019, https://www.youtube.com/watch?v=1PuvvkRUwgE, մուտքի ամսաթիվ՝ 23.05.2019։

[6] Նույն տեղում։

աշխատանքներին[7]: Կարճ ժամանակ անց Օվաջըքի տարածքում ստացված բերքը մրցունակ դարձավ ոչ միայն տեղում, այլև սկսվեց արտահանվել հարևան գավառներ, ավելի ուշ՝ նաև արտասահման[8]: Ստացված շահույթի մեծ մասը որպես աշխատավարձ տրվում էր աշխատողներին, մի հատվածն էլ ուղղվում էր ուսանողների վարձերի վճարմանը:

Օգտագործելով Թունջելիի՝ ջրային պաշարներով հարուստ լինելու հանգամանքը՝ Մաչօղլուն Օվաջըքում սահմանեց շոկային գին[9] ՝ 50 դուրուշ (40 դրամ) 1 խորանարդ մետր ջրի համար[10]:

Նման միջոցառումների շնորհիվ նա ի վերջո կարողացավ 4 տարում մարել առկա պարտքը: Ամեն տարի նա համայնքապետարանի շենքի պատին փակցնում էր տարվա ընթացքում քաղաքապետարանի կատարած բոլոր ծախսերը ներկայացնող փաստաթղթի հսկայական պատճեն:

Մաչօղլուի պաշտոնավարման տարիներին Օվաջըքը նաև դարձավ տարածաշրջանի տուրիստական կենտրոն, ուր այցելում են զբոսաշրջիկներ ոչ միայն Թուրքիայից, այլ նաև արտերկրից[11]: Իր գործունեության համար համացանցում «Komünist başkan» անունը ստացած Մաչօղլուն իր պաշտոնավարման տարիներին կարողա-

---

[7] Komünist başkan Tunceli'yi nasıl kazandı?, 31.03.2019, https://www.youtube.com/watch?v=vcVnVv56s68, մուտքի ամսաթիվ՝ 24.05.2019

[8] Organik ürünlerimiz, İngiltere ve ABD yolunda, 25.10.2018 https://www.youtube.com/watch?v=oly50EdxiFU, մուտքի ամսաթիվ՝ 24.05.2019

[9] Համեմատության կարգով Անկարայում մեկ խորանարդ մետր ջրի արժեքը 4,75 լիրա է, http://www.gazeteilksayfa.com/ankarada-suyun-metrekup-fiyati-ne-kadar-21-ocak-2019-su-indirimi-aski-43241h.htm, մուտքի ամսաթիվ՝ 24.05.2019

[10] Komünist Belediye Ovacık'ta bedava otobüs, sudan ucuz su, 24.09.2014, https://t24.com.tr/haber/komunist-belediye-ovacikta-bedava-otobus-sudan-ucuz-su,268616, մուտքի ամսաթիվ՝ 24.05.2019

[11] Tuncelide play keyfi, 02.07.2017, https://www.aa.com.tr/tr/turkiye/tuncelide-plaj-keyfi-/852591, մուտքի ամսաթիվ՝ 24.05.2019:

ցավ լիովին շահել բնակչության վստահությունը և համակրանքն ու հայտնի դառնալ ամբողջ Թուրքիայում:

Զարմանալի չէ, որ Մաչօղլուի առաջադրման մասին հայտարարությունը ոգևորություն առաջացրեց Թունջելիում և շրջակա բնակավայրերում: Իր առաջին հայտարարությամբ Մաչօղլուն նշեց, որ Օվաջըքի մոդելը բերելու են նաև Թունջելի: Նրա կարգախոսը հետևյալն էր «Խոսքը, լիազորությունը, վճիռը՝ Դերսիմի ժողովրդին»: Հատկանշական է, որ քարոզարշավի ամբողջ ընթացքում Մաչօղլուն Թունջելի անվան փոխարեն կիրառում էր նախկին անունը՝ Դերսիմ:

Սրա հետ մեկտեղ դեռ 2019 թ. փետրվարի սկզբին Թունջելիի բնակչության շրջանում անցկացված սոցհարցումների արդյունքները ցույց են տալիս, որ հարցվածների միայն 10-15%-ն էր աջակցում Մաչօղլուին: Ընտրություններում առաջատար էր համարվում Ժողովուրդների դեմոկրատական կուսակցությունը՝ որպես քրդամետ ուժ: Մինչև Մաչօղլուի առաջադրումն ակնկալվում էր, որ հիմնական մրցակցությունը կընթանա ՀԺԿ-ի և ԺԴԿ-ի միջև[12]:

Հատկանշական է, որ փետրվարի 28-ին Cumhuriyet թերթին տված հարցազրույցում Մաչօղլուն հայտարարել էր, որ ԺԴԿ-ն և այլ ժողովրդավար ուժերը ոչ թե իրենց մրցակիցներն են, այլ ընկերները[13]: Այս հայտարարությանն ուշագրավ արձագանք ստացվեց ոչ թե ԺԴԿ-ից, այլ Թուրքիայում ահաբեկչական կազմակերպություն համարվող Քրդստանի աշխատավորական կուսակցության կողմից[14]: ՔԱԿ ղեկավարներից Ալի Հայդար Քայթանը հայտարարեց, որ Մաչօղլուի համար ամենաճիշտ որոշումը կլինի իր թեկնածությունը հանելն ու ԺԴԿ-ին աջակցելը: Այս հայտարարությունը հանրության

---

[12] Komünist başkan Tunceli'yi alır mı? Tunceli halkı ne diyor? https://www.youtube.com/watch?v=XWTmZRTGHsw, մուտքի ամսաթիվ՝ 25.05.2019

[13] Cumhuriyet gazetesi, 28 Şubat, 2019, "Kayyımı biz göndereceğiz", s. 34112.

[14] PKK'lı Kaytan: Maçoğlu için doğru olmayacak, 09.03.2019, https://www.kurdistan24.net/tr/news/44ce9e2a-ef03-470f-9ee5-3545fe85f96b, մուտքի ամսաթիվ՝ 25.05.2019

կողմից որակվեց որպես սպառնալիք և էականորեն նպաստեց Մաչօղլուի հեղինակության աճին։

Այս նպատակին ծառայեց նաև կոմունիստ թեկնածուի թիմի կողմից նրա գործունեության ճիշտ ներկայացման վրա հիմնված քարոզարշավը։ Համացանցում տեղադրված բազում տեսանյութեր ներկայացնում էին Մաչօղլուին և անցած 5 տարիներին Օվաջըքում նրա ծավալած գործունեությունը։ Քարոզարշավի մեջ ակտիվորեն ներգրավվեցին Օվաջըքի բնակիչները, ովքեր եռանդով պատմում էին իրենց քաղաքում կատարված բարեփոխումների մասին։

Քարոզարշավի ընթացքում Մաչօղլուն նաև շատ էր անդրադառնում գործազրկության թեմային, ինչը ցավոտ հարց է Թունջելիի բնակիչների համար։ Նա նշում էր, թե գիտակցում է, որ Թունջելիում ավելի դժվար կլինի, քան Օվաջըքում, բայց դա իրեն չի վախեցնում։ Իր ելույթներում Մաչօղլուն նշում էր՝ հաղթանակի դեպքում Թունջելիի կառավարումը կդառնա թափանցիկ և ոչ մի լիրա այլևս չի գողացվի։

Արդյունքում ընտրություններից 1 շաբաթ առաջ անցկացված սոցհարցումների համաձայն՝ հարցվածների արդեն մոտ 25-30%-ը աջակցում էր Մաչօղլուին[15]։ Մեծ էր նաև այն քաղաքացիների թիվը, ովքեր դեռևս չէին կողմնորոշվել իրենց ընտրության հարցում։

Իսկ մարտի 31-ին գրանցվեցին հետևյալ արդյունքները՝ Ֆաթիհ Մեհմեդ Մաչօղլուն, ստանալով ձայների 32,77%-ով (5,887 քվե), հաղթեց ընտրություններում։ Երկրորդ տեղում ԺԴԿ-ն էր, որը ստացել էր ձայների 28,21%-ը (5069 քվե)։ ԺՀԿ-ն էլ, ստանալով ձայների 20,59%-ը, զբաղեցրեց երրորդ տեղը[16]։

---

[15] Tunceli yerel seçim anketi. Tunceli'yi komünist başkan kazanacak mı ?, 24.03.2019, https://www.youtube.com/watch?v=QzfBWWGR6Vs,մ, մուտքի ամսաթիվ՝ 25.05.2019

[16]https://sonuc.ysk.gov.tr/resim/49302/115495989/TUNCEL%C4%B0_TUNCEL%C4%B0-MERKEZ, մուտքի ամսաթիվ՝ 26.05.2019

Ընտրությունների արդյունքների հայտարարումից անմիջապես հետո Մաչօղլուի կողմնակիցները դուրս եկան փողոց՝ ՝ հաղթանակը տոնելու։ Մաչօղլուն միացավ նրանց, բոլորին շնորհակալություն հայտնեց աջակցության համար և հայտարարեց, որ հասկանում է իր առջև դրված խնդրի բարդությունն ու պատրաստակամ է կատարել իր բոլոր խոստումները[17]։

ԹԿԿ-ի հաղթանակն արձագանք գտավ նաև Ռուսաստանի կոմունիստների շրջանում։ Ռուսաստանի կոմունիստական կուսակցության մի շարք անդամներ հանդես եկան հայտարարություններով, որտեղ շնորհավորում էին իրենց թուրք ընկերներին՝ հույս հայտնելով, որ հաջողությունները կլինեն շարունակական[18]։

Կարելի է կարծել, թե իշխող կուսակցության համար պետք է անթույլատրելի լիներ սոցիալիստական ուժի ՝ հատկապես կոմունիստների հաղթանակը երկրի որևէ հատվածում։ Սակայն Արդարություն և զարգացում կուսակցությունը իրադարձությունների նման զարգացումը ներկայացրեց որպես Թուրքիայում «ժողովրդավարության» հերթական դրսևորում ՝ օգտագործելով այն հօգուտ իր վարկանիշի։ Կոմունիստների հաղթանակը դարձավ Թուրքիայի «ժողովրդավարության» ցուցիչներից մեկը, ինչը անշուշտ գնահատվեց արևմտյան գործընկերների կողմից[19]։

---

[17] Tunceli'de Fatih Mehmet Maçoğlu'dan başkanlık kutlaması, 31.05.2019, https://www.youtube.com/watch?v=9129gMa1ogw, մուտքի ամսաթիվ՝ 29.05.2019

[18] Ильгам Гаписов, «Избрание коммуниста мэром турецкого города-свидетельство жизнеспособности социалистических идей», 02.04.2019, https://kprf.ru/international/capitalist/183912.html, մուտքի ամսաթիվ՝ 28.05.2019

[19] Historic win:Communist candidate wins municipality in Turkey, 31.03.2019, https://www.telesurenglish.net/news/Communist-Candidate-Wins-Provincial-Municipality-in-Turkey-20190331-0014.html, մուտքի ամսաթիվ՝ 30.05.2019

GOR HOVHANNISIAN
(YSU)

ABOUT THE VICTORY OF THE COMMUNIST PARTY OF TURKEY IN TUNCELI DURING LOCAL ELECTIONS OF TURKEY IN 2019

On March 31st 2019 in Tunceli (formerly Dersim) was recorded an unprecedented election result in the history of The Republic of Turkey – a communist candidate was elected as a major. This can be truly characterized as an original uprising against the authorities. Although Machoglu's election was mostly based not on his ideological orientation, but his personality factor, we can confirm that Dersim continues to remain a center of dissidence in the country even to this day. This fact received a special attention in the press – generating interest in the public, which did not give in the interest raised by the discussions around the elections in Istanbul.

Of course it's unrealistic to talk about any chain reaction or global consequences, but the fact, that in Tunceli a candidate representing the communist party is elected major, represents a modern-day display of traditional presence of left-wing ideology in the region.